ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2023 թվականի N 103 - Ա

«ԶԱՐԹՈՆՔ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Զարթոնք» մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:
2. Հաստատել՝

1) «Զարթոնք» մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
2) «Զարթոնք» մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.
3) «Զարթոնք» մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.
4) «Զարթոնք» մշակութային միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.
5) «Զարթոնք» մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

09.03.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. մարտի 9
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. մարտի 9 -ի
N 103 -Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ
«Զարթոնք» մշակութային միջոցառման

1. Հ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Ա. Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական
3. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
5. Ս. Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
6. Ա. Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
7. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

3/9/2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. մարտի 9-ի
N 103-Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
«Զարթոնք» մշակութային միջոցառման

1. Միջոցառման նպատակն է գարնան զարթոնքի հետ մարզում մշակութային կյանքի արժևորելը և ակտիվացնելը: Կանանց միջազգային օրվան նվիրված մարզի բնակչության շրջանում մայրության ու գեղեցկության փոխադարձ կապը ներկայացնելը: Գարնանային տոնի կապակցությամբ մարզի տարբեր ոլորտներում աշխատող վաստակաշատ կանանց գնահատանքի արժանացնելը, նրանց նկատմամբ հարգանք, ակնածանք, երախտագիտության խոր զգացմունքներ ու սեր արտահայտելն ու մեծարելը:
Կանանց միջազգային օրվան և մայրության ու գեղեցկության միամսյակին նվիրված մարզի բազմավաստակ, ստեղծագործական հաջողությունների հասած կանանց շնորհավորելն ու խրախուսելը:

Կազմակերպել ՀՀ Սյունիքի մարզպետի հանդիպումը զինված ուժերում, ոստիկանությունում, արտակարգ իրավիճակներում ծառայող կանանց, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում ավանդ ունեցող կին մանկավարժների, առողջապահության ոլորտում կին աշխատողների, բանակում մեկ ընտանիքից երեք զինվոր ունեցող մայրերի, կին ստեղծագործողի և 12 երեխա ունեցող բազմազավակ մոր հետ՝ արժանացնել նրանց խրախուսման:

«Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից կներկայացվի «Ժայռ» պիեսի բեմականացումը:

Կկազմակերպվի տոնական հյուրասիրություն:

2. Կկազմակերպվի Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության միջազգային օրվան նվիրված գիտաճանաչողական այց՝ Կապանի տարածաշրջանի պատմամշակութային վայրեր, Հալիձորի բերդ հայկական ճարտարապետական համալիր, կիրականացվեն տարածքի և ջրահեռացման փոսերի մաքրման, ցանկապատի կարգավորման աշխատանքներ, համալիրի հարակից տարածքում կանցկացվեն ազգային խաղերի կազմակերպում՝ մարզի դպրոցների աշակերտների մասնակցությամբ:
- «Ճանաչել, արժևորել, պահպանել» թեմայով միջոցառման մասնակիցների հանդիպումը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովվի հետ:
- Մոմավառություն՝ Հալիձորի բերդ ճարտարապետական համալիրում:

3/9/2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. մարտի 9 -ի
N 103 Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«Զարթոնք» մշակութային միջոցառում

Միջոցառման նպատակը.

Միջոցառման նպատակն է արժևորել գարնան զարթոնքն ու մեծարել կանանց, ներկայացնել մայրության ու գեղեցկության կերպարի ներդաշնակ կապն ու իմաստավորել ռազմի դաշտում, թե խաղաղ կյանքում հայ տղամարդկանց թև ու թիկունք դարձած, հավատարիմ ընկեր ու հուսալի հենարան համարվող հայ կնոջ կարևոր առաքելությունը՝ որպես մեր ժողովրդի դարավոր ավանդույթների կրող ու փոխանցող, մեր արժեհամակարգի պահապան և մեր ինքնության առանցք:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Զարթոնք» մշակութային միջոցառման պատվիրատուն է՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը մարզի քաղաքային համայնքների մասնակցությանբ:

Միջոցառման մասնակիցները

«Զարթոնք» մշակութային միջոցառմանը մասնակցում են մանկավարժներ, ուժային կառույցներում կին ծառայողներ, բանակում մեկ ընտանիքից երեք զինծառայող ունեցող մայրեր, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառի կին աշխատողներ, կին տնօրեններ, Սյունիքի մարզպետի աշխատակազմի աշխատողներ, մարզի դպրոցականներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումները անց են կացվելու ս/թ մարտ-ապրիլ ամիսների ընթացքում՝ Սյունիքի մարզի Կապան համայնքում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

«Զարթոնք» մշակութային միջոցառումը կազմակերպվում է ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը, միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ: Միջոցառումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է պատվիրատուի կողմից կատարող կազմակերպությունը:

3/9/2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. մարտի 9-ի
N 103 - Ա որոշման

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Զարթոնք» մշակութային միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216	50.0
2	Հանրային սննդի ծառայություններ	4236	163.0
3	Նվերներ	4237	100.0
4	Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	4239	264.0
5	Մասնագիտական ծառայություններ	4241	182.0
6	Գրասենյակային	4261	100.0
	Այլ ծախսեր	4861	41.0
	Ընդամենը		900.0

3/9/2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
Գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ մարտի 9 -ի
N 103 - Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Զարթոնք» մշակութային միջոցառում

h/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	**1.1** ՀՀ Սյունիքի մարզպետի հանդիպումը զինված ուժերում, ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչությունում,ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Սյունիքի մարզի փրկարարական վարչությունում ծառայող կանանց, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում ավանդ ունեցող կին մանկավարժների, առողջապահության ոլորտի կին աշխատողների, հայկական բանակի կին ծառայողների, բանակում մեկ ընտանիքից երեք զինվոր ունեցող մայրերի, կին ստեղծագործողների և մտավորականների հետ և արժանացնել նրանց խրախուսման:	Մարտ 2023թ.	ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան
	1.2 «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Ժայռ» պիեսի բեմականացում:	Մարտ 2023թ.	ք. Կապան «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
	1.3 Հյուրասիրություն՝ Կանանց միջազգային օրվա և Մայրության ու գեղեցկության տոնի կապակցությամբ:	Մարտ 2023թ.	ք.Կապան

3/9/2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան